216

Домашняя

Арифм

2 отд

Литограф
87

Ольга
1909

$ 2004

ԳԻՔՈՐԸ

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ.

ԱՌՐՈՒՅՑ

ԱՌՐ. Ը-ՅԱ ԱՐՎԵՏՔ Ա ՄԵՍՈՊՔՍ, ԳՈՖԼՈՒՍ

9915

99 Ն
Ա
Հնդեսագիր
87

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԳԻՔՈՐԸ

2 ՏԻՊ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՍ. 7.
1909

(32646)
20 Ռ

87-2014
Ա87

1

Գիւղացի Համբօի տունը կռիւ էր ընկել։

Համբօն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տայ, որ մարդ դառնայ, աշխատանք անի։ Կինը չէր համաձայնում։

—Չեմ ուզում, իմ քօրփա երէխին էն-անիրաւ աշխարքը մի գցիլ, չեմ ուզում, լալիս էր կինը։

Բայց Համբօն չըլսեց։

Մի խաղաղ առաւօտ էր. մի տխուր առաւօտ։ Տանրցիք ու հարևանները եկան մինչև գիւղի ծէրը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփա դրին։

Քոյրը, Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալօն մօր գրկից ձայն էր տալի—«Գիքո՛ղ, էտ ո՞ւր ես գնում, հէ՞ Գիքո՛ղ»։

Գիքորը շուտ շուտ ետ էր նայում։ Տեսնում էր դեռ գիւղի ծէրին կանգնած են նրանք ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը։ Դարձեալ հօր կողքով վազում կամ առաջն էր ընկնում։ Մին էլ ետ նայեց. գիւղը ծածկւել էր բլուրի ետև։

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում։

—Արի հա, Գիքոր Ջան, արի հա, հասանք հա,—որ-

դուն կանչելով գնում էր Համբօն, շալակին մի խուրջին, մէջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա թութուն։

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երևաց գիւղը հեռու մշուշում։

—Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛, ցոյց տաւ Գիքորը՝ մատը մեկնելով դէպի գիւղը, թէև տունը իսկի չէր երևում, ու անցան։

Առաջին իրիկունը ղոնախ ընկան մի գիւղում։ Տանտէրը Համբօի հին ծանօթն էր։

Դեղին սամօվարը թշշում էր տախտի ծէրին։ Մի ջահել աղջիկ շրըխկշրըխկացնելով բաժակները լւանում ու թէյ էր շինում։ Նա մի կարմիր սիրուն շոր ունէր հագին։ Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանի համար մի էնտեսակ շոր դարկի։

Իրիկնահացից ետը տանտէրն ու Համբօն թինկը տըւած, չիբուխ քաշելով զրուց էին անում։ Խօսեցին Գիքորի մասին։ Տանտէրը գովեց Համբօին, որ չարչարւում էր որդուն մարդ շինի։ Յետոյ սկսեցին խօսել կռւի վրա, հացի թանգութեան վրա, բայց Գիքորը շատ էր յոգնած, քունը տարաւ։

Միւս օրը քաղաք մտան։ Գնացին ծերունի թաւլաչու մօտ։ Առաւօտը բազարն իջան։

—Բիձա, էդ երեխին ծառայ ես տալո՞ւ, խանութի ներսից հարցրեց մի վաճառական։

—Հրամանք ես, ասաւ Համբօն ու Գիքորին էն կողմը հրեց։

—Բեր ինձ տուր, ես կը բռնեմ, առաջարկեց վաճառականը։

Նրան ասում էին բազազ Արտեմ։

2

Համբօն քաղաքում Գիքորին ծառայ տաւ բազազ Արտեմի տանը։ Պայմանն էն էր, որ Գիքորը պէտք է տունը մաքրէր, ամանները լւանար, ոտանամանները սրբէր, դուքանը բաժին տանէր, ու էս տեսակ մանր ծառայութիւններ, մինչև մի տարի։

Մի տարուց ետը բազազը նրան պէտք է տանէր դուքան, շինէր դուքանի «աշկերտ», ու էսպէս Գիքորը պէտքէ բարձրանար։

—Հինգ տարի դեռ փող չեմ տալ, ասաւ բազազը պայմանը կապելիս։—Թէ դրուստը կուզես, դեռ դու պէտք է տաս, որ քու որդին բան է սովորելու։ Ախար իսկի բան չըգիտի...

—Որտեղից գիտենայ, խազէին ջան, պատասխանեց Համբօն, որ գիտենար, էլ ո՞ւր կըբերէի, ես էլ բերել եմ, որ բան սովորի...

—Կըսովորի, ամեն բան կըսովորի։ Էնպէս սովորի որ... Ձեր կողմերից էն Նիկօլն ինչ է, որ իրեն համար դուքան ունի բաց արած, նա էլ ինձ մօտ է մարդ դա-

ռել։ Ամա վերջում մի ջուխտ չայի գդալ ու մի քանի բան գողացաւ...

—Չէ, խազէին ջան, սա գողանալ չի։ Որ էդպէս բան անի, կը գամ կըռնիցը կը բռնեմ էն Քուռը կը գցեմ։

—Հա, որ ձեռը հալալ է՝ մարդ կը դառնայ։

—Իմ դարդն էլ էն ա, աղա ջան, որ մարդ դառնայ. լեզու սովորի, գրիլ-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարքումն ինձ նման խեղճ ու զուրկ չը մնայ... Ինքն էլ աչքաբաց երեխայ ա, մեր գեղական շկոլումն էլ գրաճանանչ ա էլել, գրի սևն ու սիպտակը ջոկում ա։ Ամա աղաչանքս էն ա, որ լաւ մը-

տիկ անէք, դարիբ երեխայ ա, քօրփա ա...

Բազազը Համբօին միամտացրեց ու դուրս գնաց բարձր ձէնով հրամայելով՝—«Չայ բերեք, հաց բերեք սրանց համար...»

3

Հէր ու որդի նստած էին բազազ Արտեմի խոհանոցում։

—Դէ, հիմի դու գիտես, Դիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղայ ես դուրս գալի... Հէնց պէտք է անես, որ... ես ինչ գիտեմ...ով Տէր Աստած... մոնչաց Համբօն ու չիբուխը լցրեց։

Այն ինչ Դիքորը չորս կողմն էր դիտում։

—Ապի, սրանք բուխարի չունեն։

—Չէ, սրանցը փէչն ա, ա՛յ էն ա փէչը...

—Կալ էլ չունեն։

—Սրանք քաղաքացի են, գեղացի հօ չեն, որ կալ կասեն։

—Բա որտեղից են հաց ուտում։

—Փողով առնում են ուտում։ Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փէտն էլ, ջուրն էլ...

—Վա՛...

—Բա՛, սրան Թիֆլիզ կասեն։ Դու հալա զոչաղ կաց, դեռ շատ բան կիմանաս։

—Ապի, սրանք ժամ ունեն..

—Ունեն բաս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնեայ են։ Մըտիկ արա հա—ձեռնաքաշութիւն չանես։ Կարելի ա քեզ փորձելու համար փող վեր կը գցեն, մօտենաս ոչ։ Թէ վերցնես էլ, տար ասա—«խանում էս ինչ փող ա, էստեղ վեր ընկած էր, աղա՛, էս բանն էստեղ գտայ», Թէ չէ...

—Էստեղ էլ պրիստաւ կա՞յ որ...

—Կայ բա՛ս... Վախտ ու անվախտ դէս դէն չընկնես, ձեռդ ընկած վողը քօռ ու փուչ չանես, հազար ու մի պակասութիւն ունենք։ Քեզ էլ լաւ պահի, գիշերները բաց չելես, մրսես ոչ... Մի մին եկողի հետ գիր դարկի... մերթ մերթ

չիբուխը բերանից հանելով որդուն խրատում էր Համբօն։ Այն ինչ Գիքորը ննջում էր։

—Հացի կտորտանքն ու քարթուն կը տան, կերակուրի թերմացքը կը տան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չը կայ, ծառայի կարգն է դա... Օրեր են, կը մթնեն անց կը կենան...

Շարունակում էր հէրն իր խրատը, բայց Գիքորը հօրը թինկը տւած քնել էր արդէն։

Էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ յոգնել էր բոլորովին։

Մրքով լիքը խանութները, դէզերի նման դարսած զոյնզգոյն չթերը, տեսակ—տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանանչի բարձած աւանակները, թաբախները գլխներին կինտօները... էս ամենի գոռոցն ու զընգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնւած ղժւրժում էր նրա գլխում։ Եւ նա յոգնել էր ու հօրը թինկը տւած քնել։

—

Էս ժամանակ բազազն ու իր կինը վիճում էին ներսը։ Կինը տրանջում էր, որ ծառան խամ էր, նոր սարիցն եկած, վայրենի, իսկ մարդն ուրախ էր, որ մի քանի տարով անվարձ ծառայ էր գտել։

—Կը սովորի, հօ էդպէս չի մնալ, ասում էր նա կնոջը։

—Կը սովորի, որդի, սիրտդ շուռ մի բերի,—խնդրում էր բազազի պառաւ մայրը։

Բայց տիկին Նատօն չէր համոզւում։ Նա արտասւելով անիծում էր իր բախտը։

4

Գիքորը մենակ նստած էր բազազ Արտեմի խոհանոցում։ Նա արդէն ծառայութեան մէջ էր։

Խազէինի հին գլխարկը մինչև ականջները կոխած գլուխը, հին ոտնամանները ոտներին, մի մաւի բլուզ էլ հագին, էսպէս ոտից գլուխ փոխւած, նա նստած էր խոհանոցում ու միտք էր անում, թէ ընչի եկաւ իրենց գիւղից, որտեղ է ընկել, հիմի ինչ պէտք է անի...

Էս ժամանակ ներս մտաւ տիկին Նատօն։

Գիքորը տեղը նստած էր։

Տիկինը մի բան ասաւ։ Գիքորը լաւ չը լսեց, թէ չը հասկացաւ։

—Քնե՞զ չեմ ասում, տօ արջի քոթոթ։

Գիքորը շփոթւեց, քրտնեց. մին ուզեց հարցնի թէ ինչ է ասում, մին էլ սիրտ չարաւ։ Աղջիկ պարոնը բարկացած դուրս գնաց։

—Ը՞հ, հողեմ ձեր գլուխը, որ վայրենի էք ու գալիս էք մարդի գլխի խաթա դառնում... Ես բան եմ ասում, սա տեղիցն էլ ժաժ չի գալի, ձէն էլ չի հանում...

—Վերջացաւ, անցաւ Գիքորի մտքովը։ Բայց ինչ

շուտ վերջացաւ... ինչ վատ վերջացաւ... Հիմի ես ինչ անեմ... հէրս էլ գնաց...

Եւ ամեն բան նա վերջացած էր համարում, երբ իրեն իրեն խօսելով ներս մտաւ սև շորերով բարի պառաւը, բազազի մէրը։

—Որ աղջիկ պարոնը ներս է գալի տեղիցդ ընչի չես կանգնում, որդի, խրատում էր նա Գիքորին, որ բան են հարցնում ձէն հանի... ոնց կըլի էդպէս...

Պառաւին դէդի էին ասում։

Դէդին սովորեցնում էր Գիքորին թէ ինչ պէտք է անի, ինչպէս սամովարը գցի, ոտնամանները սրբի, չօրակը բռնի, ամանները լսանայ...

Բացի պառաւ դէդին ամենքը նեղացնում էին նրան։

Բազազի «դուքանի աշկերտներն» էլ շարունակ ծաղրում էին նրան, «քիքի» էին կանչում, քիթը քաշում, գլխին խփում, գլխարկը կոխում ականջները։

Բայց էս բոլորը տանելի բաներ էին։

Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանայ։ Իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու, կամ թէ չէ՝ փէշն էր դնում, գնում հանդը։ Երբ ուզում էր՝ մի ծառի տակի կամ աղբերի վրայ նստում էր ուտում։

Հիմի էստեղ ուրիշ տեսակ էր։ Ինչքան էլ սոված լինէր՝ պէտք է սպասէր մինչև ճաշի ժամանակը գար, էն էլ ամենքն ուտէին, ետոյ ինքը։ Էդ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր գալի, որ խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթռում։

Մին, երկու, տասը համբերելուց ետը նա սկսեց չորս կողմն աչք ածել խոհանոցում, թէ արդեօք մի բան չի գտնիլ ուտելու, որ սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը գայ։

Սկզբում ինչ գտնում էր—չոր հացի փշրանք, կրծած ոսկոր թէ ուրիշ բան, գցում էր բերանը։ Մի քիչ ետո մտածեց խոհանոցի պահարանները որոնել։ Ապա թէ սովորեց կերակուրի պղնձից կլիսեփ մսի կտոր գուրս քաշել...

Բայց եթէ նկատէին...

Ինչ վատ բան գուրս կը գար...

Եթէ նկատէին...

Հապա ինչ անես...

Թողնէս, փախչէս...

Եւ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին։

Բայց ոնց փախչես, որ կողմը փախչես. մենակ, ճամփա չըգիտես, մարդ չես ճանաչում... իսկ հէրը...

Էնքան չարչարուեց, խօսեց, խրատեց «օրեր են, որդի, կը մթնեն, անց կը կենան...»

Եւ ահա Գիքորի գլխում հնչում է հօր խանձած ձէնը,—«Օրեր են, կը մթնեն, անց կը կենան... անց կը կենան...»

5

անգը տին։

Գիքորը վեր թռաւ։ Ասել էին թէ երբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով է, ինչ է ուզում։ Նա դուրս եկաւ, պատշգամբից նայեց, տեսաւ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջը կանգնած։

—Էդ ո՞վ էք, հէյ, ձայն տաւ վերևից։

Ներքևից վերև նայեցին։

Տիկինները ծիծաղեցին, իսկ պարոնը ակնոցներն ուղղելով հարցրեց։

—Աղջիկ պարոնը տա՞ննն է։

Ի՞նչ էք անում, հարցրեց Գիքորը։

Ներքև ծիծաղն աւելի սաստկացաւ։

—Քեզ հարցնում են՝ տա՞ննն է, թէ չէ, բարկացաւ պարոնը։

—Բան ունէք։

Էս աղմուկի վրա տիկինը դուրս եկաւ։

—Քրքրուես դու՝ գնա դուռը բաց արա, շուտ, ճչաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն։ Բայց շուտով հիւրերն երևացին և նա ժպտալով դիմաւորեց։

—Ա՜ բարև, բարև,... էս ո՞ր խաչիցն էր, ի՞նչպէս է որ մտաբերեցիք...

—Էս ո՞րտեղից էք գտել, ոտից գլուխը Գիքորին չափելով հարցրեց պարոնը, իսկ տիկինները շարունակ ծիծաղում էին։

—Ի՞նչ էք նախանձում, կուզէք ձեզ տանք, կատակի տաւ տիկինն ու հիւրերը խնդալով ներս մտան։

Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց ետևից իսկոյն ներս մտաւ և տիկին Նատոն։

Իրար առողջութիւն հարցնելուց ետը հիւրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմութիւնը, և դուրս եկաւ մի ահագին պատմութիւն։

—Օ՜ֆ, սիրտս մաշել է, գանգատւում էր տիկին Նատոն.—թէ իմանաք՝ ինչ եմ քաշում ես դրա ձեռիցը... Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դէ Արտեմի բնաւորութիւնը գիտէք էլի, ասում է՝ մեղք է, գեղացի երեխայ է, թող կենայ, մի կտոր հաց է, ուտի, կը սովորի... Ախր էլ ե՞րբ... սիրտս մաշեց...

—Օ՜հ, օհ, օհ, էդ ծառաների բանն էլ մի ասի,—

էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հիւրերը։

Մի կէս ժամ խօսեցին դէսից դէնից, ծառաներից, քաղաքի նորութիւններից։ Հէնց էդ խօսակցութեան ժամանակ ներս մտաւ քրտնած Գիքորը։

—Աղջիկ պարոն, միրգը բերի։

—Հա, լաւ, գնա, հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հիւրերն սկսեցին ծիծաղել։

—Աղջիկ պարոն, խազէինն ասում էր՝ բալը թանգ ա, հարկաւոր չի...

Էս խօսքերի վրա հիւրերից ոմանք պորտկացին ու թաշկինակով բերաններին հուպ տուին, ոմանք էլ տանտիկնոջ խայտառակութիւնը ծածկելու համար վկայեցին, թէ իրաւ բալը շատ թանգ է, էս ժամանակին ով է բալն առնում։ Ապա սկսեցին յանդիմանել, թէ ինչ հարկաւոր է միրգը, հօ ուտելու համար չեն եկել, ինչ են նեղութիւն քաշում...

Տանտիկինը մինչև ականջակոթերը կարմրած աշխատում էր մի կերպ եղածն ուղղի։

—Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս յիմարը։

—Ով սուտ ասի՝ գետինը մրտնի, երդուեց Գիքորը, ու ամեն բան լրացաւ։

6

Իւրերին ճամփու դնելուց ետը տիկին Նատօն բարկացած, բարձր բարձր խօսելով վեր էր քաղում մրգի սեղանը։ Նա հայհոյում էր Գիքորին, մէկ մէկ թւում էր թէ ինչեր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն։

—Քա, խամ է, որդի, կը սովորի, որդի... ինչի ես սիրտդ շուռ բերում... Ախ Աստծ, ի՞նչի չես հոգիս առնում, հառաչում էր պառաւ դէդին։

—Երանի մի իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ինչ ես խօսում... Խամ է, դէ գնացէք դուք շինեցէք, ես հօ ձեր գերին չեմ, ձէնն աւելի բարձրացնելով պատասխանեց պառաւին հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անէծքը մինչև ամուսինը տուն դար։

Ամուսնու ոտնաձայնը որ լսեց՝ սկսեց արտասուել, աւելի բարձր խօսել ու ամանները իրար գլխով տալ։

—Ասում եմ՝ դուրս արա կորչի. ես ծառայի բանն էլ կանեմ, թէ խնայում ես՝ փող տաս, կարգին ծառայ բռնես... Լաւ է մարդ ծառայի տեղ էլ քաշ դայ, քան թէ

ամեն օր էսէնց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հո չէ՞ս...

—Ի՞նչ է պատահել,—հարցրեց բազազը՝ տան մէջ-տեղը կանգնելով։

—Ի՞նչ պէտք է պատահի. էս էր մնացել որ խալխի մօտ էլ մարդ գետինը մտնի, էս էլ արիր. էլ ի՞նչ պատահի, վրա թռաւ տիկինը ու պատմեց բալի պատմութիւնը։

—Վա՜հ, բացականչեց բազազը։

—Ա՛խ Աստծ՛ծ, հառաչում էր բարի պառաւը՝ դէս ու դէն ընկնելով։

Բազազը Գիքորին ձէն տուեց։

Թմփթմփացնելով Գիքորը ներս ընկաւ։

—Մօտիկ արի, կանչեց բազազը։

Գիքորը վախեց նրա գոյնից, մնաց տեղը կանգնած։

—Քեզ ասում եմ՝ մօտիկ արի...

Գիքորն էս անգամ շարժուեց, բայց դարձեալ մնաց տեղը կանգնած։

—Տօ, արՋի քոթոթ, ես քեզ ասում եմ՝ աղՋիկ պարոնին ասա, դու գալիս ես ղոնախներին ասում թէ բալը թանգ է՞ր...

—Ես... ես... աղՋիկ պարոնին... ուզում էր արդարանայ Գիքորը, բայց խօսքը բերանում՝ ապտակը հասաւ, աչքերը կայծակին տուին, գլուխը դիպաւ կողքի պատին ու վեր ընկաւ։ Հէնց ընկած տեղն սկսեց բազազը ոտքել անդադար կրկնելով—«բալը թանգ էր հ՞ը... բալը թանգ էր, հ՞ը...»

Պառաւ դէդին դողդողալով մէջ ընկաւ, աշխատում էր ետ քաշի կատաղած որդուն, աղՋիկ պարոնն էլ եկաւ, երեխաներն էլ սկսեցին ճչալ, բազազը ետ կանգնեց հեւալով ու կրկնելով—«բալը թանգ էր, հ՞ը», աչքերը միշտ չռած անկիւնում կծկուած Գիքորի վրա, որ դողալով ու ցաւագին մրմնջում էր.

—Վա՜յ, նանի Ջան, վա՜յ... վա՜յ, նանի Ջան, վա՜յ...

7

Մեսան տանը չի կարողանում ծառայի՝ խանութ տարան Գիքորին։ Էնտեղ ապրանք պէտք է տային մուշտարիների հետ տանելու, չիթ պէտք է ծալէր, խանութը սրբէր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կանչէր։

Եւ ահա Գիքորը հաց է տանում խանութը։ Կերակրամանը ձեռքին, մաշած ու տժգոյն, մեծ մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով։ Նայեց ներքև։ Քարանսարանների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Քուռը, ոլորւում, պտտւում ու ճնշւելով խեղդւում, խուլ թշղում կամուրջի տակին։

Ափից մօտիկ պտտում էր մի կանաչ նաւակ։ Երկու հոգի կային նրա մէջ. մինը ուռկան էր ձգում, միւսը նաւն էր կառավարում։

«Ա՛յ հիմի կը հանի», ասաւ Գիքորն ու կանգնած նայում էր ձկնորսներին։ Ուռկանը դատարկ դուրս եկաւ։

—Էս մինն իմ բախտիցը—ասաւ Գիքորն ուռկանը

(32646)
ԱՀ-2014

ձգելիս։ Գիքորի բախտը դատարկ դուրս եկաւ։

—Էս մինն էլ մեր Զանի բախտիցը։

Էս էլ դատարկ դուրս եկաւ։

—Էս մինն էլ Գալօի բախտիցը։

Գալօն էլ էր անբախտ։

—Էս մինն էլ բաս...

Բայց էտ ժամանակ մօտիկ քարւանսարի դռանը աղմուկ բարձրացաւ։ Մի պարսիկ կապիկ էր պար ածում երգելով.

Ա՛յ արի, արի, մէյմուն,
Ճիպոտըդ սարի, մէյմուն,
Պառաւի պէս կուզի կուզ,
Ջահելի պէս պարի, մէյմուն։

Ժողովուրդը հաւաքւել էր գլխին ու վազում էին չորս կողմից։ Գիքորն էլ վազեց։ Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի, չըկարողացաւ։ Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնի թէ ինչ է կատարւում մէջ տեղը։

—Ինչ ես ներս խծկւում, տօ լածիրակ, գնա քու բանին, ասաւ մի կինտօ ու զարկեց գլխին։

Գիքորը յանկարծ սթափւեց ու վազեց դէպի խանութը։

8

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցում։ Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրւում էին խազէինի ապտակների տեղերը, դեռ նոր էր լռել աղջիկ պարոնի ձէնը—շուշացնելով ներս մտաւ Վասօն, բազազի աշկերտը։ Գիքորին նկատելով՝ նա իսկոյն կանգ առաւ ու մասխարա դէմքին լրջութիւն տալով սպառնալի հարցրրեց.

—ԿլուբՈՒՄ ուշացար, տօ արջի քոթոթ, թէ գուբերնատի մօտ վառազ գործ ունէիր...

Գիքորը գլուխը չէր բարձրացնում։

—Ասա մի տեսնեմ է, տօ...

Գիքորը լուռ էր։

—Չէս իմանում, տօ. որտեղ էիր է, որ էսօր ինձ քաղցած սպանեցիր. որ մեռնէի՝ ետոյ...

Էսպէս խօսելով կամաց կամաց մօտեցաւ, մի քիչ կանգնեց ու յանկարծ զարկեց Գիքորի գլխին։ Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմւեց պատին։ Վասօն պատրաստւում էր մի ուրիշ ձևի հարւած էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացաւ խազէինի ձայնը։ Գալիս էր։

—Աբա տես հիմի քեզ ինչ է անում, սպառնաց Վասօն։

«Հիմի ինձ կը սպանեն», անցաւ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արաւ։

Խազէինը արդէն բաւականին ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չըտան, որ իմանայ թէ ինչ բան է քաղցածութիւնը։

Վտանգն անցաւ։

Գիքորը հանգստացաւ, թէև լսում էր աղջիկ-պարոնի ձայնը, որ ճչում էր.—Ախր ընչի՞ ես պահում, դուրս ա՜րա կորչի՞ էլի, դուրս արա կորչի՞...

9

Գիքորը կծկուեց վերմակի մէջ, գլուխը կոխեց տակը, տապ արաւ։

«Լուսնեակ գիշեր, բոլորովին քուն չունեմ,
Ինձ տեսնողը կարծում է թէ տուն չունեմ, վա՛յ,
տուն չունեմ...»,

իր երգը երգելով Վասօն հաց էր ուտում։ Գիքորը վերմակի տակից երբեմն զգոյշ ծիկրակում, թաքուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում։ Նա էն օրը հաց չէր դրել բերանը. ծեծուել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում։

—Հ՞ը, ինչ ա, սոված քունդ չի՞ տանում հա, էդպէս...—նկատեց չարաճճի Վասօն ու մի կտոր հաց ու պանիր տաւ Գիքորին։—Դէ, առ, տեղի տակին թաքուն կեր, խազէինը չիմանայ։

Գիքորը յափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտածում։ Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ աղատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում էր էն երեկոների վրա, երբ հէրն ու մէրը կռւում էին իրեն քաղաք բերելու համար... մէրը լաց էր լինում, չէր ուզում...

—Ա՜խ, նանի ջան, ինչ լաւ էր սիրտդ իմացել,—հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում ականջը սրած, թէ խազէինը հո չի գալի։

Իսկ առաւօտը կանգնած էր խանութի դռանը։

10

Խանութի դռանը կանգնած ձէն էր տալի Գիքորը, մուշտարի էր կանչում ու բարձր ձէնով գովում իրենց ապրանքը։

—Կանչի՞ էլ, ա՛ռ. ինչ ես մնջուել, մնացել կանգնած։ Բերանումդ հո ջուր չը կայ։

—Է՛ստի համեցէ՛ք, Էստի համեցէ՛ք... կանչում էր Գիքորը։

Ներսը ծիծաղից թուլանում էին։

Նրան սովրեցրել էին, որ մուշտարի քաշի դէպի իրենց խանութը։ Եւ նա յաճախ բռնում էր էս կամ էն անցորդի փէշից, կոպիտ սւ յամառ սկսում էր քաշել դէպի խանութը, ու բաց չէր թողնում, մինչև որ մարդը

դուրս էր գալի համբերութիւնից։ Գալիս էր դարձեալ իր տեղը կանգնում ու կանչում։

Ամառուայ տօթ օրերին, խանութի դռանը երկար



կանգնելուց յոգնած, նա երբեմն նստած քնում էր խանութի առաջին դարսած չթերի վրա։

Էդ ժամանակ չարաճրճի ընկերները կամ հարևանները բռնօթի էին բռնում նրա քթի տակը։

Նա փռշտալով վեր էր թռչում։

Շոգից թմրած վաճառականները զարթնում էին։ Իսկ խազէինը կուշտ ծիծաղելուց յետոյ ձայն էր տալի։

—Քնում ես, տո, արջի քոթոթ, կանչի է...

—Է՛ստի համեցէք, Էստի համեցէք,—ձէն էր տալի Գրիքորը։

11

Մի օր էլ Գրիքորը երբ մուշտարի էր կանչում՝ գիմացից երկու գիւղացի դուրս եկան։ Նա վազեց, փաթաթուեց գիւղացիներին։

—Ա՛յ տղայ, իսկի ճանաչեցի ոչ, էս ինչ բան էր, զարմացած բացականչեց գիւղացիներից մինը ու դարձաւ ընկերին։

—Բաղո, դու կըճանանչէիր...

—Ես աչքերիցը կը ճանանչէի, պարծեցաւ ընկերը։

Ճշմարիտ, որ Գրիքորը շատ էր փոխուել, շատ էր մաշուել։ Ինքն էլ էր փոխուել, շորերն էլ։ Դժար էր ճանաչելը։

—Ա՛յ տղայ, էս կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շնորհին... հիանում էին գիւղացիները։

—Համբօի հողը մեր գլխին· տես, նա իր տղին որտեղ հասցրեց, մեր տղերքը էնտեղ խոզ են արածացնում...

Այն ինչ Գիքորը իրար ետևից հարցնում էր.

Իմ մէրը ոնց ա... մեր երեխէքը ոնց են... իմ հէրն ընչի՞ չեկաւ... մեր կովը ծնել ա թէ չէ... մեր գեղումն ով ա մեռել...

Ամենն էլ լաւ են, շատ բարով կանեն,—պատասխանեցին գիւղացիք.—Էն ա Սուքնանց. Ղուկասը մեռաւ, մին էլ Պուճուրանց պառաւը, ճնացածը լաւ են։

—Բա իմ հէրն ընչի՞ չի գալի։

—Քու հէրը լաւ ուզում ա, ամա ոնց գայ։ Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան ջափէն վրէն...

—Բա բան չեն դարգե՞լ...

—Ինչ ունեն որ ինչ դարգեն, դու ձեր տան բանը գիտես ոչ։ Էս տարի էլ հացը բարակ էր, խեղճ հէրդ զոռով ծէրը ծէրին ա հասցնում։ Նրանից ի՞նչ ես ուզում։ Թէ ունիս, դու դարգի. հրէն խարջ են ուզում—ձեռին գոշ չունի։

—Հօ մեր տանիցը ոքմի չի՞ հիւանդացել։

—Չէ՛, էն ա ձեր Ծաղիկ կովը Միրզանց գոմի փլեկովը ներքև ընկաւ սատկեց։

—Ծաղիկը սատկե՞ց...

Խեղճ մէրդ էնքան լաց էլաւ աչքերն ուռան։

Էս ասելով գիւղացիներից մինը մի նամակ հանեց տուաւ Գիքորին ու ասաւ.

—Չիմի ի՞նչ ես ասում. մենք էլ քեզ տեսնիլ չենք, գնալու ենք. թէ մօրդ կամ քւորդ համար բան ես դարգելու, տուր տանենք։

—Ո՞ր տեղից բան դարգեմ, դեռ փող չեմ ստանում... ամա...

—Ամա ի՞նչ...

—Ուզում եմ՝ ես էլ գամ ձեզ հետ։ Համ մեր գեղին, համ մերոնց կարօտել եմ, համ էլ...

—Վա՛յ, վա՛յ, մենք հէնց իմացանք մարդ ես դառել, խելօքացել ես... էդ տեսակ բան կասե՞ն։ Էստեղ քեզ համար աղավարի ապրում ես—շորերդ թազա, ոտն ու ձեռդ իստակ... Մենք ասում ենք մեր երեխանցն էլ տեղ անես բերենք, դու էտ ի՞նչ ես ասում։ Էն որ ասել են «խոզի գլուխը դրին խալիչին, գլորւեց ետ ցեխն ընկաւ,» հալալ քեզ համար են ասել։

Էսպէս յանդիմանեցին գիւղացիները, խրատեցին, ճնաս բարով ասին ու գնացին։

Նրանց գնալուց ետը Գիքորը իր անկիւնը քաշւեց ու բաց արաւ հօր նամակը։

«Իմ սիրելի որդի Գիքոր Ջան։
'Ի քաղաքն Թիֆլիզ։

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առողջութինըն ենք ուզում, ամէն։ Քեզ շատ կարօտով բարով են անում Ալին, Նանը, Զանին, Մօսին, Միկիչը, Գալօն, ամէն։ Մեր սիրելի որդի Գիքոր. ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և Նանն ու Զանին տկլոր են և տեղներս շատ նեղ ա։ Գիքոր Ջան, մի քանի մանէթ փող ղարգի և մի գիր ղարգի քու որպիսութիւնիցը։ Եւ իմա-

ցած ըլես, որ Ծաղիկը սատկեց, և Նանն ու Զանին տըկ-
լոր են։

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր ա-
նում Գիքորը. դարդ էր անում իրանց տան համար։ Սիր-
տը էրում էին նամակի տողերը։

—Նանն ու Զանին տկլոր են... Տեղներս նեղ ա...

—Կանչի է, տո, ինչ ես վերացել, ուշքդ հետները
գնաց...—ձէն տուին ներսից։

—Էստի համեցէք, էստի համեցէք, կանչում էր Գի-
քորը խանութի դռանը կանգնած։

12

Ձմեռը եկաւ։ Սառն աղմուկով ձիւնախառն բուքը
թռչում է քաղաքի վրրով։ Փողոցներում սուրում, սու-
լում, հոսան է անում։ Վզզալով մտնում է անկիւնները,
աղքատի ու տկլորի է մահ գալի, պանդուխտ ու անտէր
երեխայ է որոնում։

Ահա գտաւ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին խանութի դռանը կանգնած
ձէն էր տալի նա.

—Էստի համեցէք, էստի համեցէք...

—Հրէսսս...—չարախինդ սուլելով ցուրտը, աներևոյթ
թրի նման, զարկեց անցաւ ոսկորները։ Գիքորը դո-
ղաց։

Առանց էն էլ նա շատ էր մաշւած. էդքանն էլ հե-
րիք էր նրան։ Ու անկողին ընկաւ։

13

Հիւանդ պառկած էր Գիքորը բազազ Արտեմի խո-
հանոցում։ Պառաւ դէդին օրը մի քանի անգամ ներս էր
մտնում իրեն իրեն խօսելով։

—Ի՞նչ կուզես, որդի, Գիքոր։

—Ջուր...

Դէդին ջուր էր տալի։ Հիւանդը դողդոջուն ձեռնե-
րով բռնում, ագահ խմում էր ու կրկին ուզում։

—Էս սիրտս հովացնում չի, դէդի... ես մեր աղբրի
սառը ջրից եմ ուզում, դէդի... ես մեր տունն եմ գը-
նում... ես իմ նանին եմ ուզում...

Բազազ Արտէմը ցաւի մէջ էր ընկել։ Նա դէս դէն
ընկաւ, նրանց կողմերից մարդ գտաւ, ապսպրեց, որ
Համբօն գայ, իսկ Գիքորին տարաւ քաղաքային հիւան-
դանոցը։

Էնտեղ շատ հիւանդներ կային շարքերով պառկած։
Տխուր տընքում էին ու օճորքին նայում անզօր հայեացք-
ներով։

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում։

Էստեղ գտաւ նրան հայրը։

—Էտ ինչ ես էլել, Գիքոր Ջան, մղկտալով վրա ընկաւ Համբօն։

Գիքորը տաքութեան մէջ չիմացաւ հօր գալը։



—Գիքոր Ջան, բա եկել եմ է, Գիքոր Ջան... ես քու ապին եմ է...

Հիւանդը ոչինչ չը հասկացաւ։ Նա զառանցում էր ու զառանցանքների մէջ կանչում էր—«Միկիչ, Զանի, Ապի, Նանի...»

—Էստեղ եմ, Գիքոր Ջան, նանը զարկել ա, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չեմ... Միկիչն ու Զանին հրէն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում։ Ինչ ես ասում. դէ խօսա է, Գիքոր Ջան...

—Էստի համեցէք, էստի համեցէք,— բացականչեց հիւանդը, զանազան անկապ, կցկտուր խօսքեր ասաւ ու ծիծաղում էր տաքութեան մէջ։

14

Ի երկու օրից հետը Համբօն գնում էր իրենց գիւղը։

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր։ Կռան տակին տանում էր շորերը, որ մէրը լաց լինի վրէն։ Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտան։ Էն էլ երևի, քրոջ—Զանի համար էր հաւաքել ու պահել...

Գնում էր Համբօն ու մտածում։ Շատ ժամանակ չէր անցել, որ էդ միևնոյն ճամփով քաղաք եկաւ իր Գիքորի հետ։ Ահա էստեղ էր, որ նա ասաւ.

—Ապի, ոտներս ցաւում են...

Եւ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...

Ահա էնտեղ էր, որ ասաւ.

—Ապի, ծարաւ եմ...

Ահա էն աղբիւրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չը կայ...

Միւս օրը, երբ Համբօն անցնում էր լեռները՝ հեռւում երևաց իրենց գիւղը։

Գիւղից դուրս կանգնած սպասում էին Նանը, Զանին, Միկիչը, Մօսին, իսկ փոքրիկ Գալօն մօր գրկից կանչում էր.

—Ալէ, ալէ, հէ Գիքոլ...

216

0014526

2013